ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

5 Նոյեմբերի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

152
(3002)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԿՐՔԵՐԸ ՉԵՆ ՀԱՆԴԱՐՏՎՈՒՄ. ՄԵԼԻՔԲԵԿՅԱՆԻՆ ՀԵՌԱՑՆԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԿԱ՞

Հայկական ֆուտբոլի աղետալի վիճակի մասին բազմիցս խոսվել է: Ցավոք սրտի, ՀՖՖ ներկա ղեկավարության ապաշնորհ քաղաքականության հետեւանքով հայկական ֆուտբոլը թերեւս գտնվում է պատմական ամենացածր նիշ-ի վրա. գրեթե անդադար պարտություններ են կրում բոլոր տարիքային խմբերի հավաքականները, իսկ ազգային թիմը հազիվ է կարողանում ոչ ոքի կորզել նույնիսկ Ֆարերյան կղզիների հավաքականի դեմ խաղում:

Մելիքբեկյանի եւ նրա տեղակալ Արմեն Նիկողոսյանի կողմից իրականացրած քաղաքականությունը հանգեցրել է նրան, որ ֆեդերացիայի նախագահի հրաժարականն են պահանջում ոլորտի կարեւոր խաղացողները՝ «Փյունիկ», «Ուրարտու», «Շիրակ» ակումբները, հավաքականի «ՖԱՖ» եւ «Կարմիր արծիվներ», «Արարատ Արմենիա», «Շիրակ», «Ուրարտու» ակումբների երկրպագուները եւ բազմաթիվ անհատներ:

Ֆեդերացիայում տիրող իրական վիճակի մասին կարելի է դատել թեկուզ միայն այն փաստով, որ ուրբաթ օրը որոշ փոքր ակումբներ տեղադրեցին տեքստ, իբրեւ թե սատարում են Մելիքբեկյանին, իսկ տեքստը մի քանի անգամ փոխվեց, քանզի այնտեղ կային, օրինակ, «ՆՈԱ» եւ «Արարատ Արմենիա» ակումբների անունները, որոնք հետո հանվեցին: Ստացվում է՝ ծանրակշիռ ակումբներից ոչ մեկը չի ուզում պաշտպանել այս մարդկանց:

Մեզ փոխանցում են, որ իշխանական վերնախավում եւս, կարծես թե, հակված են հեռացնելու անդադար խնդիրներ ստեղծող ու դրա դիմաց որեւէ արդյունք չտվող Մելիքբեկյանին, ով, ըստ որոշ տեղեկությունների, մի քանի անգամ դիմում է գրել, որը կանխել է ֆեդերացիայի իրական ղեկավար ընկալվող Արմեն Նիկողոսյանը: Ի դեպ, կիրակի օրը պետք է սպորտային ալիքներից մեկով եթեր հեռարձակվեր Արմեն Նիկողոսյանի հարցազրույցը. դրա մասին նախապես հայտարարվել էր, սակայն ինչ-ինչ պատճառներով այն հետաձգվեց եւ փոխարենը եթեր հեռարձակվեց երկուշաբթի երեկոյան:

Մենք բազմաթիվ անգամներ գրել ենք ՀՖՖ-ում տեղ գտած արատավոր ու արտաքնապես հանցակազմ պարունակող երեւույթների մասին, բարձրաձայնել ենք ծնողների կողմից արված բողոքները, սակայն ՀՖՖ ներկա ղեկավարը, ով նախկին լրագրող է, կառույցը դարձրել է շատ փակ, ու հնարավոր չէ որեւէ տեղեկություն ճշտել:

Հ.գ. Հանուն հայկական ֆուտբոլի առողջացման մեկնարկած բողոքի ակցիաները գնալով ծավալվում են, դրան ներգրավվում են նորանոր մարդիկ. մեզ փոխանցում են, որ պեսական կառույցներում եւս առկա է անհանգստություն, ու սա այն դեպքում, երբ հասարակությունն ընդամենը արդյունք է պահանջում, եւ չկա քաղաքական հարց: Տարիներն անցնում են, ու արդյունք այդպես էլ չկա, ավելին՝ խայտառակ վիճակ է 14-ից 21 տարեկանների հավաքականներում, որոնց պարտություններ եւ խայտառակ հաշիվների մասին խոսել ենք: Մեր աղբյուրները պնդում են, որ ֆանատական շարժումներն ու ակումբները տրամադրված են խիստ վճռական ու գնալու են մինչեւ վերջ՝ ընդհուպ մինչեւ ՈՒԵՖԱ-ի կենտրոնակայանի մոտ ակցիայի իրականացում ու եվրոպական լրատվամիջոցների ուշադրության հրավիրում: Հայաստանում ստեղծված «հակաֆուտբոլային» վիճակին. սա իրականում ազգային իմիջի հարց է, ու բոլորը պետք է պայքարեն հանուն ազգի, ոչ թե անձնական շահի:



ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի տիկնոջ՝ Աննա Հակոբյանի «Իմ քայլը» հիմնադրամի առաջին նվիրատուների շարքը պակաս կասկածելի եւ խնդրահարույց չէ, որքան ՔՊ կուսակցության դրամահավաքը: Եթե ՔՊ կուսակցության դրամահավաքի նվիրատուները նվիրատվություն էին արել 1 մլն դրամ եւ ավելի, սակայն դրա մասին տեղյակ չէին եղել, ապա «Իմ քայլը» հիմնադրամի ընթրիքի նվիրատվությունը ակնհայտորեն արտոնությունների ակնկալիք կամ ներողամտության ակնկալիք էր: Հիմնավորենք պնդումը փաստերով. հոկտեմբերի 31-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կնոջ՝ Աննա Հակոբյանի՝ «Հաջողակից՝ սկսնակին» ծրագրի շրջանակում կազմակերպված «Երիտասարդի երազանք» նախագծի բարեգործական ընթրիքին մասնակցել էր 62 հաջողակ տղամարդ գործարար, ինչի արդյունքում «Իմ քայլը» հիմնադրամը հավաքել է 62 մլն դրամ: Հարկ է նշել նաեւ, որ երեկույթից առաջ շրջանառվող տեղեկության համաձայն՝ մասնակիցների նախնական թիվը 52-ն էր, իսկ մուտքավճարը՝ 1 մլն դրամ: Արդյունքում, «Իմ քայլը» հիմնադրամը «շահեց» 10 մլն դրամ ավելի: Այս մասին հայտնել են «Իմ քայլը» հիմնադրամից: Ուսումնասիրելով, թե ովքեր են «Իմ քայլը» հիմնադրամի նվիրատուները, հետաքրքիր փաստեր ենք արձանագրում. Աննա Հակոբյանի կազմակերպած ընթրիքին մասնակցել է Վարդան Ալեքսանյանը՝ Dignisi անշարժ գույքի գործակալության տնօրենը: Նա անցնում է մի քրեական գործով, ըստ որի՝ նա խոշոր չափի վնաս է հասցրել երկու տասնյակից ավելի անձանց: Բանն այն է, որ Վարդան Ալեքսանյանը «Հավերժ Մուսալեռ» ՍՊԸ-ի տնօրենն էր, որը ղեկավարում էր նաեւ «Ալեքսանյան ընդ փարթերս» եւ «ՌՎ» ՍՊ ընկերությունների գործունեությունը: Նրա նկատմամբ 2010-ին ոստիկանության քննչական գլխավոր վարչությունում խարդախության փաստով քրեական գործ էր հարուցվել, խափանման միջոց էր ընտրվել կալանավորումը եւ հայտարարվել էր հետախուզում:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:



ՔՊ-ական պատգամավոր Հովիկ Աղազարյանի որդու կազմակերպած՝ մեքենաների ներմուծում/արտահանում հանցավոր սխեմայի թերեւս ամենաառանցքային դրվագը հետեւյալն է, որը փոխում է հարցի ողջ արժեքը: «Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ Վահե Հովիկի Աղազարյանը իր «գործունեության» ընթացքում եղել է նաեւ պաշտոնատար անձ, այն էլ՝ ՊԵԿ մաքսային հատվածի: Եվ այդ գործը թերեւս պետք է քննվի հակակոռուպցիոն կոմիտեում: Գուցե նրան հետին թվով ազատել են աշխատանքից, գուցե՝ ոչ. ճշտել չհաջողվեց: Սակայն Վահե Աղազարյանի արդեն հայտնի քրեական հոդվածին եթե գումարվի պաշտոնական դիրքի ենթադրյալ չարաշահումը, ուրեմն արդար քննության դեպքում նրա հայրը, օգտվելով պատգամավորական մանդատի դեռեւս առկա հնարավորություններից, պետք է կալանավայր գնա՝ որդուն այցելության: Մենք կհետեւենք զարգացումներին: Հիշեցնենք, որ պատգամավոր Աղազարյանը հայտարարել էր, որ տեղեկանալով օրենքի բացի մասին՝ իր որդուն խորհուրդ է տվել մեքենաներ ներկրել Հայաստան եւ ստանալ ԱԱՀ-ն պետությունից, եւ դրա համար հիմա քրեական գործով է անցնում՝ պետությանը վնաս տալու հատկանիշով: Իսկ Աղազարյանը, իմանալով օրենքի բացի մասին, ոչ թե ձգտել է շտկել սխալը իր լիազորությունների շրջանակում, այլ ձգտել է օգուտ քաղել՝ ընտանեկան բիզնես կազմակերպելով: Սա եւս ենթադրյալ ապօրինության մի ձեւ է, որը պետք է քննության առարկա դառնա:



Այստեղ ներկայացվող փաստերը իրավապահների եւ նրանց քաղաքական ղեկավարի, այսօր արդեն հատուկենտ ազնիվների մոտ կառաջացնեն հարցեր, որոնք ունեն ընդամենը մեկ պատասխան: Փաստաթուղթ առաջինի համաձայն (Տես ArmLur.am կայքում)՝ ՊՆ-ն «Հայր եւ որդի Երեմյաններ» ՍՊԸ-ի հետ կնքել է 7 միլիոն դրամի պայմանագիր, որը ոչ թե «ելակ է զինվորների համար», այլ «Երեմյան» ցանցի՝ երեւանյան ռեստորաններից որեւէ մեկում պարբերաբար կազմակերպվող ընթրիք՝ մինչեւ տարվա վերջ: 2-րդ փաստաթուղթը (Տես ArmLur.am կայքում) վկայում է, որ «ախորժակը ուտելիս է բացվում»-ը ոչ թե սոսկ դարձվածք է, այլ հեղափոխական իրականություն: Այն է՝ ՊՆ փոխնախարար Բրուտյանը եւ Դավիթ Երեմյանը 12.08.2024թ. կնքում են նոր պայմանագիր՝ «Համաձայնագիր թիվ 1», ըստ որի՝ 7 միլիոնը դառնում է 10 միլիոն դրամ, այնուհետեւ, մեկ ամիս անց՝ 09.09.2024թ., կնքվում է «Համաձայնագիր թիվ 2»-ը, եւ բյուջեից՝ անհայտ անձանց սնվելու գումարը արդեն դառնում է 13 միլիոն դրամ: Կարծում ենք, որ օպերատիվ աշխատանքին տիրապետող կառույցները եւ կոռուպցիայի «մասնագետ» Նիկոլ Փաշինյանը, կարդալով հոդվածը, կհասկանան, որ «ատկատը» թերեւս արվում է հենց այս սխեմայով, եւ պետք է քննություն սկսել. ՔԼՄ-ն ի զորու չէ դա անելու .... Շարունակելի:

ԶՐՈՒՅՑ

ՔՊ ԹԵԺ ՆԻՍՏԻ ՄԱՍԻՆ. ԷԴԳԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթը օրերս գրել էր, որ Նիկոլ Փաշինյանի մասնակցությամբ կայացած ՔՊ ընդլայնված նիստը խայտառակություն էր հեղափոխական թիմի համար. միմյանց մեղադրել են կոռուպցիայի, հովանավորչության, անձնական շահերը սդասարկելու, թիմը ներսից խոցելու, խարդավանքների մեջ:

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկություններով՝ վերջին ակտիվի նիստը տեւել է 3 ժամից ավելի, որի ընթացքում ՔՊ-ականները միմյանց ոչնչացրել են:

4 տասնյակից ավելի ներկաներ խայտառակել են Անդրանիկ Քոչարյանին՝ իրենց ելույթներում նրան մեղադրելով խարդավանքների, թիմի ներսում յուրայիններին կոռուպցիոն մեղադրանքներ ներկայացնելու, գործընկերներին բարոյական սահմաններից դուրս որակումներ տալու համար եւ, վերջապես, պառակտիչ գործունեություն ծավալելու համար:

Թեմայի վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ՔՊ-ական պատգամավոր Էդգար Հակոբյանի հետ:

-Պարոն Հակոբյան, մամուլը գրեց, որ նախաձեռնող խմբի նիստը բավականին թեժ է անցել: Քննարկվել է Անդրանիկ Քոչարյանի պահվածքը, Հովիկ Աղազարյանի պահվածքը, անգամ Նիկոլ Փաշինյանն է շատ բարկացած եղել, որ թիմում նման խարդավանքներ են տեղի ունենում, իսկ ինքը տեղյակ չէ: Տեղեկություններ ունենք, որ թիմակիցները բողոքել են հատկապես Անդրանիկ Քաչարյանից: Ասում են՝ այդ օրվա նիստը շատ թեժ է անցել:

-Նիստը թեժ չի եղել: Սովորական քննարկում է տեղի ունեցել, ինչպես որ բոլոր նիստերին է լինում:

Քննարկվել են սակայն նաեւ Անդրանիկ Քոչարյանի եւ Հովիկ Աղազարյանի պահվածքի դրսեւորումները, եւ թիմակիցները բողոքել են, որ Անդրանիկ Քոչարյանը պարբերաբար իրենց հասցեին ոչ ճիշտ արտահայտություններ է հնչեցնում:

Նման հրապարակումները շատ անգամ անհիմն են լինում: Նիստ է եղել, որի ընթացքում տարբեր հարցեր են քննարկվել, սակայն Ձեր նշած հարցերը չեն քննարկվել:

-Փաստորեն պաշտոնականության վերաբերյալ հարց չի՞ հնչել:

-Ո՛չ:

-Իսկ նման հարցի քննարկման դեպքում Դուք կողմ կլինե՞ք հիշյալ գործընթացին:

-Ես չեմ ուզում գնահատական տալ Ձեր հնչեցրած հարցին՝ ամենայն հարգանքով իմ բոլոր թիմակիցների նկատմամբ:

Աշխատանքային քննարկում է եղել, որի ընթացքում շատ տարբեր հարցեր են քննարկվել. նիստը նորմալ է անցել, թեժ չի եղել: Ամեն բան նորմալ է:

-Մեզ հետ առանձնազրույցներում հաճախ մի շարք պատգամավորներ նշում են, որ իրենց հասցեին ռեպլիկներ է բաց թողնում Անդրանիկ Քոչարյանը, Դուք նման միջադեպի ականատես եղե՞լ եք, կամ Ձեզ հետ պատահե՞լ է:

-Նման բան ո՛չ լսել եմ, ո՛չ էլ տեղյակ եմ նման խոսակցություններից՝ ո՛չ ռեպլիկներից, այլ հարցերից: Մնացածը պարզապես խոսակցություններ են:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԸՆԹԱՑԻԿ

ՍՐԲՈՒՀԻ ԳԱԼՅԱՆՆ ⇨ ԱԶԱՏՎԵԼ Է ՊԱՇՏՈՆԻՑ

Սրբուհի Գալյանն ազատվել է գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնից:

Հիշեցնենք, որ ՔՊ վարչությունը որոշեց ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնում առաջադրել Սրբուհի Գալյանի թեկնածությունը:

Դատախազությունում նա համակարգել է ապօրինի ծագման գույքի բռնագանձման ոլորտը:

ԿԽՄԿ-Ն ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ ԱՅՑԵԼԵԼ Է ԳԵՐԻՆԵՐԻՆ

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ներկայացուցիչները հոկտեմբերին այցելել են Բաքվում պահվող բոլոր հաստատված անձանց: Այս մասին լրատվամիջոցների հետ զրույցում հայտնել էր Հայաստանում ԿԽՄԿ պատվիրակության հաղորդակցման ղեկավար Ջառա Ամատունին:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ներկայացուցիչները հանդիպել են նաեւ Բաքվում ապօրինի պահվող Արցախի նախագահների եւ ռազմաքաղաքական մյուս պաշտոնյաների հետ:

Բաքվում պահվող բոլոր հաստատված անձանց հնարավորություն է տրվել կապ հաստատել ընտանիքի հետ, ըստ ցանկության՝ նրանք զրուցել են ընտանիքի անդամների հետ:

Հիշեցնենք՝ Ադրբեջանում այս պահին պահվում է Ադրբեջանի կողմից հաստատված 23 անձ, որոնցից 17-ը գերեվարվել են 2023 թ.-ի ագրեսիայի արդյունքում: Նրանցից 8-ը բարձրաստիճան պաշտոնյաներ են, 10-ը՝ զինծառայող, 5-ը՝ քաղաքացիական անձ:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՊՈՒՏԻՆԸ ԿԸՆԴՈՒՆԻ ԱՐՍԵՆՅԱՆԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳԻՐԸ

Այսօր՝նոյեմբերի 5-ին, ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը կընդունի 28 նոր դեսպանների, այդ թվում՝ ՀՀ դեսպան Գուրգեն Արսենյանի հավատարմագրերը: Այս մասին հայտնում է Կրեմլի մամուլի ծառայությունը:

Արարողությունը, ավանդույթի համաձայն, տեղի կունենա Կրեմլի պալատի Ալեքսանդրյան սրահում:

ԳՅՈՒՄՐԻՈՒՄ ՔՊ-Ի ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒՆ ԿԱՐԵՆ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆՆ Է

Գյումրիում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քաղաքապետի թեկնածուն Կարեն Սարուխանյանն է լինելու: Այս մասին լրագրողներին հայտնել է ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը:

Սարուխանյանն այժմ իշխող խմբակցության պատգամավոր է, ՔՊ տարածքային կառույցի ղեկավար: Նախկինում ղեկավարել է Շիրակի մարզը:

Ինչպես հայտնի է, հոկտեմբերի 28-ին «Բալասանյան» դաշինքը ունեցած 14 մանդատը վայր դնելու արձանագրություն է ներկայացրել թիվ 31 ԸԸՀ: Գյումրու քաղաքապետ Վարդգես Սամսոնյանը հրաժարական է տվել:

ՎԱՐԿ՝ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

«Զբոսաշրջության ռազմավարությունն այս պահի դրությամբ դեռ չի հաստատվել եւ ակտիվ քննարկումների փուլում է», - ԱԺ-ում հայտարարեց էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը:

Նա տեղեկացրեց, որ Համաշխարհային բանկի հետ 5-ամյա պայմանավորվածություն է ձեռք բերվել, որի շրջանակում նախատեսվում է 100 մլն դոլար վարկային միջոցներ վերցնել եւ ՀՀ մարզերում 10 զբոսաշրջային կլաստեր կառուցել:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-3-Ը ՀԱՎԱՔԱԳՐՎԵԼ Է 72,528,400 ԴՐԱՄ

Տեղեկացնում եմ, որ նոյեմբերի 1-ի, 2-ի եւ 3-ի վճարումների արդյունքներով՝ «Երեւանի ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից հավաքագրվել է 72,528,400 ՀՀ դրամ: Այս մասին գրել է Երեւանի քաղաքապետի մամուլի խոսնակ Հայկ Կոստանյանը:

«Հավելեմ, որ մինչեւ նոր վճարային պայմաններին անցնելը հոկտեմբեր ամսվա վերջին ուրբաթ, շաբաթ եւ կիրակի օրերին հավաքագրումը կազմել է 64,944,000 ՀՀ դրամ», - գրել է Կոստանյանը:

ԹԱԳԱՎՈՐ ՖԵԼԻՊԵԻ ՎՐԱ ՁՎԵՐ, ՔԱՐԵՐ, ՑԵԽ ԵՆ ՆԵՏԵԼ

Իսպանիայում տեղի ունեցած ջրհեղեղը Վալենսիա ու Չիվա քաղաքներին մեծ վնասներ է պատճառել, աղետի հետեւանքով 214 մարդ է զոհվել, հայտնում են տեղական իշխանությունները: Փրկարարները շարունակում են որոնողական աշխատանքները:

Իշխանությունները տուժած շրջանների բնակիչներին խորհուրդ են տվել չլքել իրենց տները:

Վարչապետ Պեդրո Սանչեսը եռօրյա ազգային սուգ է հայտարարել: Ծայրահեղ պայմանները շարունակվում են՝ սահմանափակելով փրկարարական աշխատանքները:

Հիշեցնենք, որ հոկտեմբերի 29-ին մի քանի ժամում Վալենսիայի շրջանում ամբողջ տարվա ծավալով անձրեւ է տեղացել:

Վերջին անգամ Վալենսիայում խոշոր ջրհեղեղներ են տեղի ունեցել անցյալ տարվա սեպտեմբերին: Աղետի հետեւանքով զոհվել էր 3 մարդ:

Իսպանիայի վարչապետ Պեդրո Սանչեսը խնդրել է միջոցներ տրամադրել Եվրոպական համերաշխության հիմնադրամից՝ օգնելու իր երկրին վերականգնվել այս դարում մայրցամաքի ամենաուժեղ ջրհեղեղից հետո:

Ջրհեղեղից տուժած Վալենսիա այցելած Իսպանիայի թագավոր Ֆելիպեի եւ թագուհի Լետիցիայի վրա զայրացած բնակիչները ձվեր, քարեր, ցեխ են նետել:

CNN-ի փոխանցմամբ՝ նրանք թագավորի հետ աղետի գոտի եկած պաշտոնյաներին դիմավորել են սուլոցներով, «մարդասպան» վանկարկումներով: Օգնության են հասել անվտանգության աշխատակիցները, որոնք բացել են հովանոցները՝ պաշտպանելու թագավորին ու մյուսներին:

Միջազգային լրատվամիջոցները հայտնում են, որ զոհերի թիվը կարող է ավելանալ: Զոհերի թվում է նաեւ 70-ամյա մի կին, որի մարմինը հայտնաբերվել է իր տնից ավելի քան 12 կիլոմետր հեռավորության վրա:

Քաղաքացիները պաշտոնյաներին մեղադրում են աղետին դանդաղ արձագանքելու, ինչպես նաեւ աղետը կանխելու համար գործողություններ չձեռնարկելու համար:

Español պարբերականը, վկայակոչելով իր աղբյուրները, գրել էր, որ ավելի քան 250 մարդ համարվում է անհետ կորած:

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ. ՀԱՐՑԵՐ

ՔՆՆԱՐԿՎԵԼՈՒ Է ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՀՎԱԾՔԸ

Կկայանա «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության արտահերթ նիստ: Այս մասին Ազգային ժողովում լրագրողների հետ ճեպազրույցի ընթացքում ասաց ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը:

Նիստի ընթացքում քննարկվելու է ՔՊական պատգամավորներ Հովիկ Աղազարյանի եւ Անդրանիկ Քոչարյանի պահվածքի հարցը:

Ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ՔՊ գրասենյակում Նիկոլ Փաշինյանը հանդիպել է կուսակցության անդամների հետ, ներկա են եղել նաեւ իշխանական բոլոր պատգամավորները:

«Ժողովուրդ» օրաթերթին բացառիկ տեղեկություններ են հայտնի դարձել ՔՊ նախաձեռնող խմբի նիստից:

Մեր տեղեկություններով՝ հանդիպման հիմնական օրակարգը ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանի պաշտոնանկության եւ ՔՊ խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանի պահվածքն է եղել հոկտեմբերի 15-ի ԱԺ լսումների ժամանակ, երբ վերջինս վիրավորեց ՔԿ ղեկավար Արգիշտի Քյարամյանին:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նիստին շուրջ 40 ՔՊ-ական ելույթ է ունեցել Անդրանիկ Քոչարյանի եւ Հովիկ Աղազարյանի վարքի հետ կապված:

ՔՊ-ականները Նիկոլ Փաշինյանին պատմել են, որ Անդրանիկ Քոչարյանը տեւական ժամանակ է՝ տհաճ արտահայտություններ է հնչեցնում իր թիմակիցների վերաբերյալ, մշտապես կոնֆլիկտներ է ստեղծում, բոլորի հետ բղավելով է խոսում եւ ՔՊ խմբակցության բոլոր պատգամավորներին մեղսագրում է կոռուպցիայի մեջ թաթախված լինելու կամ անբարոյականության մեջ:

ՔՊ նիստի մասնակիցները Նիկոլ Փաշինյանին ասել են, որ Անդրանիկ Քոչարյանը, լինելով այդ կարեւոր հանձնաժողովի նախագահ, փոխարենը զսպվածություն ցուցաբերի՝ մշտապես կոնֆլիկտների մեջ է մտնում թե՛ իր թիմակիցների, թե՛ լրագրողների, թե՛ քաղաքացիների հետ:

Ահա, այս բողոքները ներկայացնելուց հետո, ՔՊ-ականները նշել են, որ Անդրանիկ Քոչարյանը պետք է պաշտոնանկ արվի:

«Ժողովուրդ» օրաթերթը ավելի վաղ գրել էր, որ պաշտոնանկության նախաձեռնողները ՔՊ խմբակցության պատգամավորներ Հրաչ Հակոբյանը, Սիսակ Գաբրիելյանը, Վիլեն Գաբրիելյանը եւ Երեւանի փոխքաղաքապետ Արմեն Փամբուխչյանն են:

Նշենք նաեւ, որ Անդրանիկ Քոչարյանը չի սպասել, որ թիմակիցներն իր դեմ դուրս կգան, իսկ նման դժգոհություններն իր հասցեին լսելուց հետո՝ նա պապանձվել է, որեւէ կերպ չի արձագանքել:

ՔՊ նիստին նաեւ խստորեն քննադատել են Հովիկ Աղազարյանին, որ վերջինս իրավապահ ու ուժային կառույցների ղեկավարների մասնակցությամբ լսումները վերածել է անձնական հարցերը լուծելու ժողովի:

Հովիկ Աղազարյանը եւս իրեն շատ վատ է զգացել ու չի իմացել՝ ինչ խոսի:

Ինչպես մեր աղբյուրներն են փոխանցել՝ այս ամենը շատ բարկացրել է Նիկոլ Փաշինյանին, ու նա ասել է՝ շատ տհաճ է, որ իր քաղաքական ուժի ներսում նման միջադեպեր են լինում, իսկ ինքը տեղյակ չէր եղել:

Նիկոլ Փաշինյանը նաեւ հայտարարել է, որ Անդրանիկ Քոչարյանի պաշտոնանկության հարցը թողնում է պատգամավորների որոշմանը, վերջիններս էլ ասել են, որ իրենք խմբակցության նիստ կանեն, կորոշեն Անդրանիկ Քոչարյանի պաշտոնանկության հարցը, իսկ Հովիկ Աղազարյանի մասով քանի վարույթ կա հարուցված՝ թող իրավապահ համակարգը որոշի:

Այս շաբաթ, կարելի է ասել, թեժ է լինելու, ՔՊ-ն պետք է այս հարցով խմբակցության նիստ անի, եւ, մեր տեղեկություններով, ՔՊ-ում հակված են հեռացնելու Անդրանիկ Քոչարյանին: Վերջինս էլ ասել է, որ եթե իրեն պաշտոնանկ անեն, ապա մանդատը վայր է դնելու:

Ք. Մ.

ԱԺ ՆԱԽԱԳԱՀԸ ԼՐԱԳՐՈՂԻՆ ՋՐԿԵԼ Է ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄԻՑ

ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմը դադարեցրել է «Մեդիահաբ» ՍՊԸ-ին պատկանող MediaHub.am լրատվական կայքի լրագրող Վահե Մակարյանի հավատարմագրումը:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը հոկտեմբերի 31-ին ՀՀ Ազգային ժողովում հերթական անգամ խուլիգանական պահվածքով է աչքի ընկել:

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկություններով՝ նա հայհոյանքներ է հնչեցրել, փողոցային բառապաշար գործածել, որը լսելի է եղել միջանցքներում: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացել էր, որ ԱԺ «Հայաստան» խմբակցության սենյակների հատվածում՝ դեպի ճաշարան տանող միջանցքում, աղմկահարույց միջադեպ է տեղի ունեցել MediaHub.am կայքի լրագրող Վահե Մակարյանի եւ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի միջեւ: Մեր տեղեկություններով՝ Վահե Մակարյանը Ալեն Սիմոնյանին մոտեցել է հարցազրույցի խնդրանքով, սակայն խոսակցությունը ցանկալի հունով չի գնացել, իրավիճակը լարվել է, զրույցը վերածվել է վիճաբանության, հնչել են փոխադարձ հայհոյանքներ, որոնք լսվել են ողջ խորհրդարանում: Իրավիճակն այնքան է թեժացել, որ թիկնազորով շրջող ԱԺ նախագահի անվտանգության աշխատակիցները, «ավանդույթի համաձայն», բռնել են լրագրող Վահե Մակարյանի ձեռքերը, հավանաբար, որպեսզի Սիմոնյանը հարվածի կամ թքի նրա վրա: Բայց, բարեբախտաբար, այս անգամ Ալեն Սիմոնյանը չի թքել, եւ նույնիսկ չի հարվածել, այլ միայն բղավել է, հայհոյել եւ փողոցային վարքագիծ դրսեւորել:

Մինչ հրապարակումը «Ժողովուրդ» օրաթերթը հարցում էր ուղարկել Ազգային ժողով՝ դեպքին առնչվող մանրամասներն իմանալու համար: Ազգային Ժողովից ստացել ենք դեպքի վերաբերյալ հետեւյալ մանրամասները:

««Մեդիահաբ» ՍՊԸ-ին պատկանող MediaHub.am լրատվական կայքի լրագրող Վահե Մակարյանը 31.10.2024 թվականին Ազգային ժողովի տարածքում, մասնավորապես՝ Ազգային ժողովի ճաշարանի նախասրահում եւ դրան հարակից միջանցքում, մոտեցել է Ազգային ժողովի նախագահին. սադրող հարցադրումներ եւ վիրավորական արտահայտություններ հնչեցրել ՀՀ վարչապետի անձի եւ վերջինիս նախկին լրագրողական գործունեության վերաբերյալ: ԱԺ նախագահը Վահե Մակարյանին հորդորել է չշարունակել խոսակցությունը, պահանջել է չվիրավորել ՀՀ վարչապետին, որին ի պատասխան՝ Վահե Մակարյանը բղավել է, անպարկեշտ արտահայտություններ արել նաեւ ԱԺ նախագահին հասցեագրված»:

ԱԺ աշխատակազմից ուղարկված պատասխանում, հղում անելով «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասին, ինչպես նաեւ «ՀՀ ԱԺ լրագրողների հավատարմագրման կարգը հաստատելու մասին» օրենքի 17-րդ կետի 3-րդ ենթակետով, ՀՀ ԱԺ աշխատակազմը որոշեց դադարեցնել «Մեդիահաբ» ՍՊԸ-ին պատկանող MediaHub.am լրատվական կայքի լրագրող Վահե Մակարյանի հավատարմագրումը:

Հետաքրքիրն այն է, որ պատասխանում իրավիճակը ներկայացված է միակողմանի: Հարցական է՝ ինչու չկա այն դրվագը, որ Ալեն Սիմոնյանը, բացի զսպվածության կոչից, ուրիշ քայլեր է արել: Լրագրողը «Ժողովուրդ» օրաթերթի հետ ունեցած զրույցում պատմել էր, որ ԱԺ նախագահը հայհոյել է իրեն եւ դրսեւորել է խուլիգանական պահվածք: Սրան զուգահեռ ԱԺ պատասխանում դատապարտվում է միայն լրագրողի պահվածքը:

Հարկ է նշել, որ այն խրախուսելի չէ, սակայն, պետք է փաստել, որ ոչ մի իրավապահ կառույց ԱԺ նախագահի պահվածքին չի անդրադառնում: Ստացվում է, որ անպատժելիությունը դարձել է ՀՀ իշխանությունների «օրակարգը»:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԻՆՉ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

«ՉԱՂ ՌՈՒՍՏԱՄԻՆ» ՄԵԿՈՒՍԱՐԱՆԻՑ ՏԱՐԵԼ ԵՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ ԱԱԾ մեկուսարանից բեռական հեղինակություն Ռուսամ Ստեփանյանին՝ «Չաղ Ռուսամին» կրկին տարել են «Էրեբունի» հիվանդանոց՝ ստուգումներ, ինչի արդյունքում նրա մոտ առողջական խնդիրներ են հայտնաբերվել, սակայն կրկին հետ են տեղափոխել ԱԱԾ մեկուսարան:

Ստեփանյանի փաստաբան Գեղամ Հակոբյանը վստահեցնում է՝նա առողջական խնդիրներ ունի ու Սերգեյ Գրիգորյանի մահվան հետ որեւէ կապ չունի:

ՀՀ քննչական կոմիտեն տեղեկացրել էր, որ 2024 թ. հունիսի 11-ին՝ ժամը 23:15-ի սահմաններում, Երեւանի Շինարարների փողոցում տեղի ունեցած 43-ամյա տղամարդու՝Սերգեյ Գրիգորյանի սպանության եւ 35-ամյա Բ. Սիմոնյանի նկատմամբ սպանության փորձի դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ, ու սպանության գործով կալանավորված են Ռուստամ Ստեփանյանը՝ «Չաղ Ռուստամը» եւ եւս մեկ անձ:

Քննությամբ փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ դեռեւս 2020 թվականից անձնական հարցերի շուրջ առաջացած վեճի, այնուհետեւ 2021թ. հունվարի 13-ին Երեւան քաղաքի Դավիթ-Բեկի փողոցի 109/10 հասցեում գտնվող «Թոխմախի» գերեզմանատան ավտոկայանատեղիում 36-ամյա անձի՝ Ռ. Ստեփանյանի եւ նրա կողմնակիցների ուղղությամբ կրակոցներ արձակվելու պատճառով թշնամական հարաբերություններ են ձեւավորվել մինչ այդ մտերիմ, «Ֆազ» մականունով հայտնի Սերգեյ Գրիգորյանի եւ Կոտայքի մարզի 36-ամյա բնակիչ, «Չաղ Ռուստամ» մականունով հայտնի Ռ. Ստեփանյանի միջեւ: Դրա հետեւանքով հետագայում վերջիններիս մտերիմների մասնակցությամբ տեղի են ունեցել մի շարք միջադեպեր, այդ թվում՝ զենքի գործադրմամբ, որոնց կապակցությամբ նախաձեռնվել են քրեական վարույթներ:

Ձեւավորված թշնամական հարաբերություններից ելնելով՝ Ռ. Ստեփանյանը, Սերգեյ Գրիգորյանին դիտավորությամբ սպանելու նպատակով, իրեն մտերիմ երեք անձանց՝Ա. Կյուրեղյանի, Հ. Սահակյանի եւ Սու. Գրիգորյանի հետ նախնական համաձայնությամբ ապօրինի կերպով ձեռք են բերել 7.62 մմ տրամաչափի «AK 103» մոդելի, հրազեն հանդիսացող ինքնաձիգ եւ համապատասխան փամփուշտներ:

2024թ. հունիսի 11-ին նրանք մի քանի անգամ հանդիպել են Կոտայքի մարզում գտնվող, Ռ. Ստեփանյանին պատկանող առանձնատանը: Վերջինիս եւ Ա. Կյուրեղյանի հետ ունեցած պայմանավորվածություններն իրագործելով՝խմբի մյուս երկու անդամները՝ Հ. Սահակյանը եւ Սու. Գրիգորյանը, իրենց հետ վերցնելով հանցակիցների հետ ապօրինի կերպով ձեռք բերված, լիցքավորված ինքնաձիգը, հեռադիտակը, երկու զույգ ձեռնոց, երկու դիմակ, ոստիկանության երկու համազգեստ, ռադիոկապի երկու սարք, լապտեր, կեղծված հաշվառման համարանիշներով Opel Astra մակնիշի ավտոմեքենայով ժամը 21:00-ի սահմաններում, Ռ. Ստեփանյանի տնից ուղեւորվել են Երեւան քաղաք:

Սերգեյ Գրիգորյանի սպանությունն իրագործելու համար հարմար պահ եւ նպաստավոր տեղ գտնելու նպատակով՝ Հ. Սահակյանը եւ Սու. Գրիգորյանը հետապնդել են նրան: Ժամը 23:15-ի սահմաններում Սերգեյ Գրիգորյանն ընկերների ուղեկցությամբ դուրս է եկել Երեւան քաղաքի Շինարարների փողոցի 25 հասցեում գտնվող բուքմեյքերական գրասենյակից, նստել մայթեզրին կայանված իրեն պատկանող Toyota Land Cruiser մակնիշի ավտոմեքենայի վարորդի նստատեղին ու պատրաստվել է հեռանալ այդտեղից:

Նկատելով, որ Սերգեյ Գրիգորյանը պատրաստվում է հեռանալ տվյալ վայրից, բազմաթիվ կրակոցներ են արձակել Սերգեյ Գրիգորյանի ուղղությամբ, որի հետեւանքով վերջինս գլխի եւ մարմնի տարբեր հատվածներում ստացել է կյանքի հետ անհամատեղելի բազմաթիվ հրազենային վնասվածքներ:

Ապա փախչելով տարբեր ուղղություններով՝ այնուհետեւ երկուսն էլ միմյանցից առանձին, գնացել են 36-ամյա անձին պատկանող, Կոտայքի մարզում գտնվող տուն, որտեղ նրանց սպասել է Ա. Կյուրեղյանը, իսկ քիչ անց միացել է նաեւ Ռ.Ստեփանյանը: Ավելի ուշ խմբի՝հանցագործությունը կատարած երկու անձինք, «Զվարթնոց» օդանավակայանով հատելով ՀՀ սահմանը, մեկնել են ՌԴ:

Պարզվել է, որ Ա. Կյուրեղյանը ողջ ընթացքում կազմակերպել է Սու. Գրիգորյանի եւ Հ. Սահակյանի տարբեր տեղաշարժերը, անհրաժեշտ գնումների կատարումը, գործողությունները:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

7 ԶԻՆՎՈՐԱԿԱՆ՝ԴԱՏԱՐԱՆԻ ԱՌԱՋ

ԹՄՐԱՆՅՈՒԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՊՔԵՐ՝ ԶՈՐԱՄԱՍԵՐՈՒՄ

Իրավապահները շարունակում են բացահայտումները զորամասերում զինվորների կողմից թմրանյութ օգտագործելու դեպքերով: Այս տարի 7 զինվորի մասով որոշում է կայացվել եւ գործ է ուղարկվել դատարան, իսկ ուսումնասիրելով տվյալները՝ «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ միայն 2023 եւ 2024 թվականի տվյալներով 24 ղարսադիր ժամկետային զինծառայող կանգնել է դատարանի առաջ՝ բանակում թմրանյութ օգտագործելու համար:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝Ներսիկ Հոխանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, պայմանագրային հիմունքներով զինվորական ծառայության մեջ գտնվելով ՀՀ ՊՆ Ն զորամասում, 2023թ. օգոստոսին Գեղարքունիքի մարզի Վարդենիս-Սոթք ավտոճանապարհի հարակից տարածքում գտնվող աղբանոցից վայրաճ եղանակով աճած Կանեփ տեսակի բույսի ցողուններից քաղելու եղանակով, առանց իրացնելու նպատակի ապօրինի ձեռք է բերել զգալի չափերի մարիխուանա տեսակի թմրանյութ, ապօրինի պահել է իր հագուստի գրպանում, որը խուզարկությամբ հայտնաբերվել է ոստիկանության ծառայողների կողմից:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Մանվել Արմենի Դավոյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ ՊՆ Ն զորամասի հրաձիգ, պարտադիր ժամկետային զինծառայող, կոչումով՝ շարքային, 2024 թվականի ապրիլի 2-ից ստացիոնար բուժման մեջ գտնվելով ՀՀ ՊՆ Ն զորամասում, 2024 թվականի մայիսի 21-ից մինչեւ նույն թվականի մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ քննությամբ չպարզված օրը, ՀՀ ՊՆ Ն զորամասի տարածքում ապօրինի գործածել է կաննաբինոիդների խմբին պատկանող թմրալկալոիդներ պարունակող թմրանյութ:

Ըստ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների՝Գուրգեն Արայի Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ ՊՆ Ն պարտադիր ժամկետային զինծառայող, կոչումով՝ շարքային, գտնվելով արձակուրդի մեջ, դեռեւս քննությամբ չպարզված վայրում 2024 թվականի հոկտեմբերի 13-ից մինչեւ հոկտեմբերի 14-ն ընկած ժամանակահատվածում ապօրինի գործածել է կանաբինոիդների խմբին պատկանող, թմրալկալոիդներ պարունակող թմրանյութ եւ 2023 թվականի հոկտեմբերի 15-ին թմրանյութ գործածած վիճակում փորձել է ներկայանալ ծառայության, սակայն դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությունը չի իրագործվել վերջինիս կամքից անկախ հանգամանքներով. 2024 թվականի հոկտեմբերի 14-ին՝ժամը 12:10-ի անկախ հանգամանքներով՝2024 թվականի հոկտեմբերի 14-ին՝ ժամը 12:10-ին, Արտաշատի պարեկային ծառայության աշխատակիցների կողմից ձերբակալվել եւ ներկայացվել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության Երաշխ քաղաքի վարչության Շենգավիթի բաժին:

Շարունակությունը՝ArmLur.am կայքում:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՉԵՆ ՎՃԱՐՎԵԼ ԽՈՇՈՐ ՉԱՓԵՐՈՎ ՀԱՐԿԵՐ

ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչությունում քննվող քրեական վարույթով բացահայտվել է տնտեսվարող սուբյեկտի կողմից առանց հաշվարկային փաստաթղթերի տրամադրման ապրանքներ իրացնելու եւ առանձնապես խոշոր չափերով հարկեր չվճարելու դեպք:

Նախաքննության ընթացքում կատարված մեծածավալ վարութային գործողությունների, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչության աշխատակիցների կողմից ձեռնարկված օպերատիվ- հետախուզական միջոցառումների եւ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկային տեղեկատվության եւ ռիսկերի վերլուծության վարչության աշխատակիցների կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ պարենային եւ ոչ պարենային ապրանքների վաճառքով զբաղվող երկու ՍՊ ընկերությունների սեփականատերը եւ գործունեությունը փաստացի ղեկավարող անձը, իսկ 2011-2022 եւ 2020-2022թթ. ընկած ժամանակահատվածներում՝ նաեւ ընկերությունների տնօրենը, խախտելով ՀՀ հարկային օրենսգրքի պահանջները, 2020 թվականի ապրիլ ամսից 2022 թվականի դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում թաքցրել է ՍՊ ընկերությունների հարկման օբյեկտը. վաճառքներ իրականացնելիս չի տրամադրել հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոններ եւ դուրս չի գրել հարկային հաշիվներ, իսկ հարկային հաշվարկներում մտցրել է խեղաթյուրված տվյալներ, ինչի արդյունքում պետական բյուջե չի վճարել առանձնապես խոշոր չափերով հարկեր:

Քրեական վարույթով ձեռք բերված բավարար ապացույցների հիման վրա ընկերության տնօրենի նկատմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով, հարուցվել է հանրային քրեական հետապնդում, եւ վերջինիս մեղադրանք է ներկայացվել: Որպես խափանման միջոց նրա նկատմամբ կիրառվել է կալանքը:

Նախաքննության ընթացքում հարկային մարմին են ներկայացվել ճշտված հարկային հաշվարկներ եւ պետական բյուջե է վճարվել 121.200.000 ՀՀ դրամ:

Մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը:

Ծանուցում. Հանցանքի համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՀՀ քննչական կոմիտե

● *Ըստ ոստիկանության տվյալների՝նոյեմբերի 1-ից 4-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 193 դեպք, որից 2-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՔԿ ՆԱԽԱԳԱՀԸ ՉԻ՞ ՏԵՄՆՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂԸ

Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքը տեղեկացնում է, որ Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի՝ 2024թ. սեպտեմբերի 23-ի թիվ 1018-Ա որոշմամբ 2024թ. հոկտեմբերի 24-ին աճուրդի է ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերից 54.4քմ հողամաս (Լոտ-86 (ՔՀ-24)) Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց, թիվ 247/2 հասցեում հասարակական նշանակության օբյեկտի կառուցման նպատակով, 576 640 դրամ մեկնարկային գնով: Կայացած աճուրդում 576 640 դրամ առավելագույն գնով հաղթել է Դիլիջան քաղաքի Շամախյան փողոցի թիվ 94 տան բնակիչ Ամալյա Հարությունյանը, որի մասին Դիլիջան համայնքի հողամասերն աճուրդային կարգով օտարող հանձնաժողովի կողմից կազմվել է թիվ 11 արձանագրությունը: Հոկտեմբերի 28-ին Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը որոշել է հաստատել Դիլիջան համայնքի հողամասերն աճուրդային կարգով օտարող հանձնաժողովի թիվ 11 արձանագրությունը եւ նշված հողամասը հասարակական նշանակության օբյեկտի կառուցման նպատակով օտարել Ամալյա Հարությունյանին: Ինչպե՞ս է ստացվել, որ աճուրդի մեկնարկային ու առավելագույն գները նույնն են: Դիլիջան քաղաքի Կալինինի փողոցում բնակավայրերի հողերից 54.4քմ հողամասի շուկայական գինը միլիոնավոր դրամներ է կազմում, ինչպե՞ս է այն օտարվել 576 հազար դրամով: Դիլիջանի համայնքապետարանում կոռուպցիոն երեւույթների մասին հոկտեմբերի 6-ին տեղեկատվական հարցում ենք ուղարկել ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանին. կոմիտեի հոկտեմբերի 10-ի պատասխանում նշված է. «Ձեր նշած հանգամանքները կենթարկվեն ստուգման եւ քրեական վարույթ նախաձեռնելու հիմքերի առկայության դեպքում կկայացվի համապատասխան որոշում»: Սասուն Խաչատրյան, հանգամանքները ստուգման ենթարկեցի՞ք, որոշում կայացրի՞ք, թե՞ Ձեզ խանգարում է այն, որ Դիլիջանի համայնքապետ Դավիթ Սարգսյանը ՔՊ Դիլիջանի կազմակերպության ղեկավարն է:

ԹԱԼԱՆՎԵԼ ԷՐ ԳՆԴԱՊԵՏԻ ՏՈՒՆԸ

Իջեւան քաղաքի հարակից Գետահովիտ գյուղում թալանել էին ՀՀ ազգային հերոս, Իջեւանի գնդի հրամանատար, 44-օրյա պատերազմում հերոսաբար զոհված Թաթուլ Ղազարյանի նորակառույց, սակայն չբնակեցված առանձնատունը: Գողությունը անցյալ տարվա աշնանն է կատարվել: Գողացել են «Բաքսի» ջեռուցման համակարգ, հեռուստացույց եւ այլ իրեր, գողերի կողմից ջեռուցման համակարգը հանելու հետեւանքով՝ առանձնատան առաջին հարկը հեղեղվել է ջրով: Տեղեկություններ կան, որ իրավապահները բացահայտել են գողությունը կատարողներին. այդ գործով նախաքննությունը շարունակվում է:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԴԵՅԼ ՔԱՐՆԵԳԻԻ ԹՈՂԱԾ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

ՇՓՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԴԵՊԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Դեռ վաղ տարիից հանրային խոսքարվեստով հետաքրքրվող Դեյլ Քարնեգին անձնական զարգացման բնագավառի հիմնադիրներից մեկն է, ում «Ինչպես ձեռք բերել ընկերներ եւ ազդել մարդկանց վրա» գիրքը իրական փոթորիկ էր առաջացրել ընթերցասերների շրջանում:



«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է Քարնեգիի կյանքից հետաքրքիր դեպքեր եւ հայտնի, սիրված ու հետաքրքիր մտքեր:

Սկսենք այն դեպքից, երբ Քարնեգին երիտասարդ տարիքում աշխատում էր Նյու Յորքում, ցանկանում էր դառնալ դերասան: Այդ ոլորտում հաջողությունների չհասնելով՝ նա հրաժարվում է դերասան դառնալու իր երազանքից:

Պարտքերի եւ դժվարությունների մեջ լինելով՝ նա սկսեց տարբեր աշխատանքներ փնտրել հասկանալու համար, թե ինչ ուղղությամբ կյանքը շարունակել:

Մի օր, երբ նա դասավանդում էր YMCA (Երիտասարդ քրիստոնյաների միություն) կենտրոնում, նկատեց, որ ուսանողները մեծ դժվարությամբ էին շփվում մարդկանց հետ եւ հաճախ վախենում էին հանրային ելույթներից: Որպես փորձարկում՝ նա առաջարկեց նրանց հանդես գալ հրապարակային ելույթներով, խոսել իրենց գաղափարների մասին եւ պատմել իրենց զգացմունքները: Սկզբում ուսանողները ամաչում էին եւ կաշկանդված էին, բայց Քարնեգին խրախուսում էր նրանց: Նրա մեթոդները մեծ արձագանք գտան, եւ նա նկատեց, որ դա օգնում է մարդկանց վստահություն ձեռք բերել:

Այդ փորձից հետո է նա որոշում, որ իր կյանքը նվիրելու է հանրային խոսքարվեստի եւ շփման հմտությունների ուսուցմանը: Իրականում այս պատահական նախաձեռնությունը նրան տարավ դեպի այն ուղին, որի շնորհիվ էլ այսօր մենք ճանաչում ենք Դեյլ Քարնեգիին՝ որպես շփման հմտությունների առաջատար մասնագետներից մեկին:

Քարնեգիի կյանքում կա մեկ այլ հետաքրքիր դեպք, որը տեղի ունեցավ, երբ նա սկսեց հանրային խոսքի դասեր տալ, բայց հենց առաջին փորձից հանդիպեց անսպասելի խնդրի:

Նրա դասերին մասնակցում էին տարբեր բնագավառների մարդիկ, բայց առաջին դասին ուսանողներից շատերը չափազանց ամաչում էին խոսելուց եւ խուսափում էին հրապարակային ելույթ ունենալուց: Քարնեգին որոշեց խնդիրը լուծել մի շատ անսովոր ձեւով. նա առաջարկեց, որ ուսանողները սկսեն իրենց անհաջողությունների մասին պատմել: Փոխանակ խոսելու ինչ-որ բարդ թեմաների մասին, որոնց մասին նրանք վստահ չէին ներկայացնում, Քարնեգին առաջարկեց պատմել այն սխալների մասին, որոնք նրանք կատարել էին: Այս մարտավարությունը գործեց հրաշալի: Ուսանողները սկսեցին մեկը մյուսի հետեւից պատմել իրենց անհաջողությունների, վախերի, եւ դժվարությունների մասին, ինչը կոտրեց լարվածությունն ու ամաչկոտությունը: Նրանք հասկացան, որ հաջողության հասնելու համար պարտադիր չէ լինել անթերի. փոխարենը՝ հաճախ անհրաժեշտ է լինել անկեղծ եւ պատրաստ ընդունելու սեփական սխալները:

Այս դեպքը Քարնեգիի համար դարձավ կարեւոր դաս. այն ցույց տվեց, թե որքան կարեւոր է մարդկանց հետ կառուցել վստահության վրա հիմնված կապ եւ տալ նրանց ազատություն՝ արտահայտելու իրենց իրական ապրումները: Այս մոտեցումը հետագայում դարձավ նրա ուսուցողական մեթոդների հիմնաքարերից մեկը՝ փոխելով այն կերպը, թե ինչպես են մարդիկ մոտենում շփմանն ու հանրային խոսքին:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է «ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ–100» ԵՌՕՐՅԱ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

Այսօրվանից՝ ժամը 11:00-ից, Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայում (Մարշալ Բաղրամյան 24, 2-րդ հարկ) կմեկնարկի «Պարույր Սեւակ-100» հոբելյանական գիտաժողովը:

Գիտաժողովի ընթացքում գիտնականներ եւ մասնագետներ ՀՀ կրթական եւ գիտական կառույցներից կներկայացնեն զեկուցումներ՝ նվիրված հայ անվանի բանաստեղծ, մշակութային գործիչ, գրականագետ, թարգմանիչ Պարույր Սեւակի կյանքին, նրա գրական գործունեությանն ու ժառանգությանը, Սեւակի պոեզիան օտար լեզուներով, նրա լեզվական արվեստը, պոեզիան հայ երաժշտության մեջ, հայ կոմպոզիտորական արվեստում, Պարույր Սեւակի պատմափիլիսոփայությունը:

«Պարույր Սեւակ-100» հոբելյանական գիտաժողովը կշարունակվի մինչեւ նոյեմբերի 7-ը՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում,

Երեւանի պետական համալսարանում եւ ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում:

Գիտաժողովը կազմակերպել են ՀՀ ԳԱԱ Հայագիտության եւ հասարակական գիտությունների բաժանմունքը, ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը, Երեւանի պետական համալսարանը, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը, Պարույր Սեւակի տուն-թանգարանը՝ ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ:

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕԾՄԱՆ ԵՎ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 25–ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ

Երեկ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծման եւ գահակալության 25-րդ տարեդարձն էր:

«Որդիական խոնարհությամբ շնորհավորում ենք Ամենայն Հայոց Հայրապետի օծման եւ գահակալության 25-րդ տարեդարձը:

Նորին Սրբությունն իր գահակալության տարիների ընթացքում հայրապետական առաջնորդությամբ եւ անխախտ կորովով կարողացել է դիմագրավել ժամանակի մարտահրավերները՝ անցյալի արժեւորմամբ, ներկայի ազգաշեն գործերով եւ լուսավոր ապագայի տեսլականով:

Հիրավի, Հայոց Եկեղեցին ապրեց հոգեւոր վերածննդի ու զարթոնքի, բարգավաճման ու բարեփոխումների շրջան՝ շնորհիվ Ամենայն Հայոց Հայրապետի ներդրած ջանքերի, հետեւողական աշխատանքի եւ եկեղեցանվեր ու ազգանպաստ գործունեության:

Մաղթում ենք, որպեսզի Ամենակալ Տերը Վեհափառ Հորը մշտապես ամուր պահի աստվածային բարեզարդ շնորհների մեջ եւ պարգեւի քաջ առողջություն երկար տարիներ հովվելու ամենայն հայոց հավատավոր հոտը՝ի փառս Քրիստոսի, ի բարօրություն մեր Սուրբ Եկեղեցու եւ ի խաղաղություն մեր Հայաստան աշխարհի»,-նշված է Մայր Աթոռի տարածած հաղորդագրության մեջ:

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 39 պատահար. 4 մարդ զոհվել է, 54-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԸՆԹԱՑԻԿ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Նվեր Բալայանս, կորցրել եմ ինձ պատկանող «Բելառուս 320.4M» մակնիշի մեքենայի 0637 UP տեխանձնագիրը: Գտնողին խնդրում եմ զանգահարել +374 97 240 290 հեռախոսահամարով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Նվեր Բալայանս, կորցրել եմ ինձ պատկանող ԲՌՄ 4 x 2 Պ մակնիշի կցորդի տեխանձնագիրը: Գտնողին խնդրում եմ զանգահարել +374 97 240 290 հեռախոսահամարով:

Fast Shift-Ը ՄԻԱՑԵԼ Է ԻԴՐԱՄԻ ԲԱՑ QR ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻՆ

Սեպտեմբերի 23-ին տեղի ունեցած ասուլիսում «Ֆասթ Շիֆթը» հայտարարել է, որ միանում է «Իդրամի» բաց QR-ենթակառուցվածքին: «Իդրամ» ընկերության եւ «Ֆասթ Շիֆթի» միջեւ կնքվեց հուշագիր, որի շրջանակում այսուհետ 22.500-ից ավելի վաճառակետերում տեղադրված «Իդրամ» QR-ը կարող են իրենց հավելվածներով սքանավորել նաեւ «Ֆասթ Շիֆթի» օգտատերերը՝ հավելվածի միջոցով:

«Open QR-ը բաց համագործակցության առաջին փորձն է Հայաստանի ֆինանսական շուկայում, ինչը շատ ողջունելի է: Fast Shift-ը վճարահաշվարկային ընկերություններից առաջինն է միացել Open QR-ին եւ նպաստելու է այս գաղափարախոսության տարածմանը: Մենք կլինենք բաց ու վստահելի գործընկերության եւ հաճախորդակենտրոն գործելաոճի մշակույթն արմատավորելու առաջատարներից», - ասել է «Ֆասթ Շիֆթ» ընկերության գործադիր տնօրեն Իրինա Գասպարյանը:

«Իդրամ» ընկերության տնօրեն Արսեն Քդենյանը շեշտում է, որ սա նշանակալի իրադարձություն է Հայաստանի ֆինանսական շուկայի համար. «Բոլոր այն ֆինանսական կառույցների հաճախորդները, որոնք կմիանան ենթակառուցվածքին, հնարավորություն կունենան իրենց իսկ ֆինանսական հավելվածներով սքանավորել Իդրամի QR-ը եւ վճարել ավելի քան 22.500 վաճառակետերում», - ասել է Արսեն Քդենյանը:

«Իդրամի» կոմերցիոն տնօրեն Գրիգորի Յոլյանի խոսքով՝ ենթակառուցվածք ասելով նկատի ունեն ոչ միայն տեխնիկական լուծումը, այսինքն՝ հնարավորությունը, որ այլ բանկերի կամ վճարահաշվարկային կազմակերպությունների օգտատերերն իրենց հավելվածներով կարողանան սքանավորել Իդրամ QR-ը: «Մենք նկատի ունենք նաեւ ֆինանսական կառույց-գործընկերների, առեւտրային կետեր-գործընկերների հետ հարաբերությունների, տեխնիկական հարցերի կարգավորման, ինչպես նաեւ հաճախորդների աջակցման մեխանիզմների ստեղծում եւ կատարելագործում», - ասել է Գրիգորի Յոլյանը:

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ ԵՆ ՀՀ ԿԲ ԿՈՂՄԻՑ

Telcell Գ

ԲԱԺՆԵՏՈՄՄԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾ Է

Մնաց մեկ ամիս ամենակարեւոր ներդրումը կատարելու համար:



Telcell ընկերության թողարկած բաժնետոմսերի վաճառքն ակտիվ շարունակվում է, արդեն հազարավոր բաժնետերեր կատարել են իրենց ամենակարեւոր ներդրումը Հայաստանի ֆինանսական էկոհամակարգերից մեկում:

Նոյեմբերի 1-ին «Արմենպրես»-ի մամուլի սրահում հրավիրված ասուլիսում «Թել-Սել» ԲԲԸ գլխավոր տնօրեն Արտյոմ Ղազարյանն ընդգծեց՝ բաժնետոմսերի նկատմամբ մեծ հետաքրքրությունը վկայում է դինամիկ զարգացման, տեսանելի աճի եւ ամենակարեւորը՝ ընկերության նկատմամբ մարդկանց վստահության մասին: Առաջնային հրապարակային վաճառքի վերջնաժամկետը 2024թ. նոյեմբերի 30-ն է:

«Դեռեւս կա մեկ ամիս՝ անդադար նորարարությունների ձգտող եւ իր ծառայությունների ու գործիքների շրջանակն ընդլայնող ընկերությանը մասնակից դառնալու համար: Մենք Հայաստանում ներդրումների նոր մշակույթ ենք ձեւավորում, եւ յուրաքանչյուր ոք հնարավորություն է ստանում դառնալու ֆինանսական ու տեխնոլոգիական նորամուծությունների շարժիչ ուժ»,-նշեց Արտյոմ Ղազարյանը՝ վստահություն հայտնելով, որ Telcell ընկերության 17-ամյա գործունեությունն ապահովել է այն կայուն հենքը, որը կմղի մարդկանց կայացնելու ողջամիտ եւ շահավետ ֆինանսական որոշում՝ բաց չթողնելով հեռանկարը:

«Արմբրոկ» ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ Արաքսյա Հարությունյանը տեղեկացրեց. «Այս պահի դրությամբ կարող ենք փաստել, որ տեղաբաշխումը ակտիվ ընթացք է ստացել, եւ ներդրողների կողմից առկա է ընկերության բաժնետոմսերի նկատմամբ բարձր հետաքրքրություն»:

Նա նշեց, որ այս տեղաբաշխումը առանձնակի կարեւորություն ունի՝ ՀՀ-ում ինչպես կապիտալի շուկայի, այնպես էլ ֆինտեխ հատվածի զարգացման եւ նորարարական մոտեցումների հետագա ներդրման տեսանկյունից:

«Համոզված ենք, որ «Թել-Սել»-ի տեխնոլոգիական եւ ֆինանսական ներուժը ավելի քան բավարար են անհատ եւ ինստիտուցիոնալ ներդրողների ուշադրությունը գրավելու համար եւ ուրախ ենք նրան շարունակաբար աջակցելու՝ շահագրգիռ բոլոր անձանց հետ համագործակցություն հաստատելու ուղղությամբ»,-հավելեց Արաքսյա Հարությունյանը:

Ընկերությունը նպատակ ունի տարեկան գրանցած շահույթի առնվազն 50 տոկոսը տեղաբաշխել որպես դիվիդենտ:

Շուրջ 1,5 մլրդ դրամ ընդհանուր արժեքով մոտ 4 մլն բաժնետոմսերի հրապարակային առաջարկի (IPO) մասին Telcell ընկերությունը հայտարարել է սեպտեմբերի 18-ին: Բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացնում է «Արմբրոկ» ներդրումային ընկերությունը, իսկ արժեթղթերի պահառությունը՝ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան: Մեկ բաժնետոմսի արժեքը 400 ՀՀ դրամ է, նվազագույն քանակը առաջին գնման դեպքում՝ 10 բաժնետոմսն է, առավելագույնը՝ 500 հազար բաժնետոմսը:

Telcell-ի բաժնետեր կարելի է դառնալ առանց որեւէ տեղ այցելելու, ընդամենը մի քանի հպումով՝ Telcell Wallet հավելվածի միջոցով: Բաժնետեր կարելի է դառնալ նաեւ այցելելով գործընկեր «Արմբրոկ» ընկերության գրասենյակ:

Telcell վճարահաշվարկային ընկերությունը հիմնադրվել է 2007 թ.-ին Հայաստանում՝ որպես առաջին վճարային տերմինալային ծառայություններ մատուցող ընկերություն: Ներկայում այն ունի ամենամեծ տերմինալային ցանցը եւ ճկուն Telcell Wallet հավելվածը: Ընկերությունը կարողացել է պահպանել առաջատար դիրքերը խիստ մրցակցային դարձած շուկայում եւ դիվերսիֆիկացրել պորտֆելը մի շարք ռազմավարական ուղղություններով՝ ստեղծելով էկոհամակարգային բիզնես:

Վերջին 7 տարիների ընթացքում Telcell-ը գրանցել է տարեկան միջինը 37 տոկոս շահույթի աճ: 2024 թվականին, ըստ ընկերության կանխատեսումների, հնարավոր կլինի ապահովել մոտ 2 մլրդ դրամի շահույթ:

«Թել-Սել» ԲԲ ընկերությունը վերահսկվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԻՆՉՔԱՆ ՀԱՐԿ ԵՆ ՎՃԱՐԵԼ

1000 ԽՈՇՈՐ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻ 2-ՐԴ ՀՆԳՅԱԿԸ

ՀՀ Պետական եկամուտների կոմիտեն օրերս հրապարակել էր 2024 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում 1000 խոշոր հարկ վճարողների ցանկը, որոնց կողմից ՀՀ պետական բյուջե վճարվել է ավելի քան 1 տրիլիոն 323 միլիարդ 205 միլիոն դրամ:

«Ժողովուրդ» օրաթերթը նախօրեին հրապարակել էր 1000 խոշոր հարկատուների առաջին հնգյակի ցանկը: Այժմ ներկայացնենք 1000 խոշոր հարկատուների 2-րդ հնգյակը:

Այսպիսով՝ 1000 խոշոր հարկատուների ցանկի հինգերորդ տեղում «Փրիթի Ուեյ» ընկերությունն է՝ ավելի քան 27 մլրդ դրամի հարկային մուտքով: 2024 թվականի երկրորդ եռամսյակում ընկերությունը խոշոր հարկատուների ցանկում կրկին հինգերորդ հորիզոնականում էր՝ ավելի քան 17 մլրդ դրամ հարկային մուտքով:

Խոշոր հարկատուների ցանկի վեցերորդ տեղում «Ամերիաբանկ» ընկերությունն է՝ ավելի քան 20 մլրդ հարկային մուտքով: 2024 թվականի երկրորդ եռամսյակում ընկերությունը խոշոր հարկատուների ցանկում կրկին վեցերորդ հորիզոնականում էր՝ ավելի քան 17 մլրդ դրամ հարկային մուտքով:

Ցանկի յոթերորդ տեղում «Սի Փի Էս Էներջի Գրուպ» ընկերությունն է՝ ավելի քան 17 մլրդ հարկային մուտքով: 2024 թվականի երկրորդ եռամսյակում ընկերությունը խոշոր հարկատուների ցանկում ութերորդ հորիզոնականում էր՝ ավելի քան 9 մլրդ դրամ հարկային մուտքով:

Ցանկի ութերորդ տեղում «Ֆիլիպ Մորրիս Արմենիա» ընկերությունն է՝ ավելի քան 14 մլրդ դրամի հարկային մուտքով: 2024 թվականի երկրորդ եռամսյակում ընկերությունը խոշոր հարկատուների ցանկում տասնչորսերորդ հորիզոնականում էր՝ ավելի քան 8 մլրդ դրամ հարկային մուտքով:

Իններորդ հորիզոնականում «Վիվա Արմենիա» ընկերությունն է՝ ավելի քան 14 մլրդ հարկային մուտքով:

2024 թվականի երկրորդ եռամսյակում ընկերությունը խոշոր հարկատուների ցանկում յոթերորդ հորիզոնականում էր՝ ավելի քան 10 մլրդ դրամ հարկային մուտքով:

Խոշոր հարկատուների տասնյակը եզրափակում է «Սիթի» ընկերությունը, որը 2024 թվականի հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում ավելի քան 13 մլրդ հարկային մուտք է կատարել: 2024 թվականի երկրորդ եռամսյակում ընկերությունը խոշոր հարկատուների ցանկում կրկին տասներորդ հորիզոնականում էր՝ ավելի քան 9 մլրդ դրամ հարկային մուտքով:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՆՈՐ ԿՐՔԵՐ

ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ԳՈՅ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Գոյ թատրոնը կվերսկսի իր գործունեությունը: Թատրոնի ներկայացուցիչներն այս խորագրով ասուլիս էին անոնսել: Թատրոնի բակում փաստաբան Կարո Ասատրյանը նշեց, որ արդարադատության նախարարությունից ստացել են իրենց հարցի վերաբերյալ դրական պատասխան:

Նախարարությանը «Գոյ»-ի ներկայացուցիչները հարց էին ուղղել՝ արդյոք վարչական դատարանում քննության ընթացքում, որտեղ վիճարկվում է Կադաստրի կոմիտեում թատրոնի գրանցման դադարեցումը, չե՞ն կասեցվում Սունդուկյան թատրոնի իրավունքները՝ գույքն օգտագործելու, տիրապետելու, տնօրինելու վերաբերյալ: ԱՆ-ից հայտնել են՝ այո՛, կասեցվում է:

Մինչ փաստաբանը խոսում էր, դուրս եկավ Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնի տնօրեն Վարդան Մկրտչյանը, լրագրողներին ու Գոյ թատրոնի երկու ներկայացուցչի հրավիրեց ներս ու սկսեց խոսել: Ասաց՝ ԿԳՄՍ նախարարության հովանու ներքո բանակցություններ են ընթանում, որին ակտիվորեն մասնակցում են նաեւ Գոյ թատրոնի ներկայացուցիչները:

Ասուլիսի մասնակիցներն ընդհատեցին՝ հարցնելով, թե ինչի՞ համար են հավաքվել, այլ բաներ է Մկրտչյանը խոսում:

«Ներողություն, այստեղ դուք չեք ասում՝ ինչ անենք», - արձագանքեց Մկրտչյանը:

Իրավիճակն այնքան թեժացավ, որ Գոյի ներկայացուցիչները լքեցին դահլիճը:

Որոշ ժամանակ անց Գոյի ներկայացուցիչները զանգահարեցին ոստիկանություն, քանի որ Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնի տնօրինությունը թույլ չի տվել մտնել թատրոն:

Ավելի վաղ Գոյ թատրոնի աշխատակազմը հայտարարություն էր տարածել, որում մասնավորապես ասվում էր. ««Արդարադատության նախարարությունը փաստեց, որ 9 ամիս շարունակ ապօրինաբար դադարեցվել է Գոյ թատրոնի գործունեությունը:

Այդ պատճառով ՆՈՅԵՄԲԵՐԻ 4-ին՝ ժամը 11:00-ից, ԳՈՅ ԹԱՏՐՈՆԸ կվերսկսի իր բնականոն աշխատանքը՝ մինչ այդ գործով դատարանի վերջնական վճիռը:

Լիահույս ենք, որ Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի տնօրենը չի խոչընդոտի եւ կենթարկվի օրինական պահանջին»,- ասված է հայտարարության մեջ:

Հիշեցնենք, որ 35 տարի գործող Գոյ թատրոնը կառավարության որոշմամբ տարեսկզբին միացավ Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնին: Գոյ թատրոնի դերասանական ու ստեղծագործական կազմը, սակայն, դեմ է այդ որոշմանը: Նրանք ցանկանում են աշխատել առանձին թատրոնում: Միավորման վերաբերյալ կառավարության որոշումը Գոյի անձնակազմը վիճարկում է դատարանում»:

ԱՆՆԱ ՄՐԱՊԻՈՆՅԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԻՏԱԼԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆԻ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ

Կոմպոզիտոր Անդրանիկ Բերբերյանը Իտալիայում կայացած Golden կարճամետրաժ ֆիլմերի միջազգային փառատոնին արժանացել է մրցանակների: Ռեժիսոր Ալիսա Զոլոնցի «Love Photosynthesis» (Սիրո ֆոտոսինթեզ) միջազգային արտադրության կարճամետրաժ անիմացիոն ֆիլմի գրված երաժշտության համար Բերբերյանը ստացել է միանգամից երկու մրցանակ՝ Golden Soundtrack եւ Overall Award Winner անվանակարգերում:

«Շատ ուրախ եմ իտալական փառատոնում արժանանալու նման մրցանակների: «Love Photosynthesis» անիմացիոն ֆիլմը շարունակում է իր հաղթարշավը տարբեր միջազգային փառատոնների շրջանակում՝ արժանանալով տարբեր երկրների հանդիսատեսի ջերմ արձագանքին եւ ժյուրիի գնահատանքին: Ռեժիսոր Ալիսա Զոլոնցի հետ համագործակցությունը շատ ստեղծարար էր, զերծ էր գեղարվեստական պատնեշներից ու սահմանափակումներից: Քանի որ բազմաբնույթ կերպարներին պետք էր մարմնավորել երաժշտությամբ յուրովի՝ ներդաշնակեցի տարբեր գործիքային եւ տեմբրային համադրություններ, որոնց շնորհիվ կարողացանք ստանալ հետաքրքիր երաժշտական սինթեզ: Եվ ես շատ գնահատում եմ մեր միջազգային համագործակցության մեկնարկը»,-նշում է Անդրանիկ Բերբերյանը:

Հավելենք նաեւ, որ ֆիլմի հնչյունային հետարտադրությունն իրականացվել է Բերբերյանի հիմնադրած Berberyan Production Studios-ում:

Նշենք, որ Անդրանիկ Բերբերյանը հեղինակել է շարք հայկական հայտնի ֆիլմերի երաժշտությունը՝ «Կյանք ու կռիվ» (2016), «Կյանք ու կռիվ 2» (2017թ.), «Էրկեն կիշեր» (2018թ.), «Կաֆկայի երազը» (2020), «Սողոմոնի երգերը» (2020թ.), «Ավրորայի Լուսաբացը» (2022), «Ամերիկացի» (2022), «Յաշան եւ Լեոնիդ Բրեժնեւը» (2024), «Մեդալի հակառակ կողմը» (2024) եւ այլն:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԻՆՈՅԻ ԱՄԻՍԸ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Երեւանում անցկացվում է Եվրոպական կինոյի ամիսը խորագրով միջոցառումը, որի մեկնարկը տրվեց Երեւանի Կինոյի տանը: Այն իրականացնում է Հայաստանի Կինոգործիչների միությունը՝ Եվրոպական միության ֆինանսավորմամբ:

Կինոյի ամիսը նվիրված է սյուրռեալիզմի մանիֆեստի 100-ամյակին, որի կապակցությամբ ցուցադրվում է նաեւ Լուիս Բունյուելի ու Սալվադոր Դալիի դասական գլուխգործոցի՝ «Անդալուզյան շունը» (1929) կինոնկարի նոր վերականգնված տարբերակը:

Ծրագիրը ներառում է 2024 թվականին լույս տեսած շուրջ 10 ֆիլմ, որոնց մեծ մասն արժանացել է ամենահեղինակավոր կինոփառատոնների պատվավոր պարգեւներին: Ցուցադրությունները տեղի կունենան նոյեմբերին՝ յուրաքանչյուր ուրբաթ եւ շաբաթ օրերին՝ 19:00-ին, Կինոյի տան Մեծ դահլիճում:

Ծրագրում ներկայացված են իրանական կինոյի ամենահանրահայտ վարպետներին Մոհամադ Ռասուլոֆի նոր՝ «Սուրբ թթենու սերմը» կինոնկարը, որ 2024-ի Կաննի կինոփառատոնում արժանացել է Ժյուրիի հատուկ մրցանակին եւ Օսկարի է առաջադրվել Գերմանիայի կողմից, Լոկառնոյի Գլխավոր մրցանակի արժանացած լիտվական «Տոքսիկ» ֆիլմը, բրիտանական կինոյի մերօրյա դասական դարձած ռեժիսոր Անդրեա Առնոլդի նոր՝ «Թռչուն» կինոնկարը, 2022 թվականին «Ոսկե ծիրան»-ի պատվավոր հյուր իսպանացի ռեժիսոր Ալբերտ Սեռայի «Մենության ցերեկները» վավերագրությունը եւ այլն:

«Ամեն տարի Եվրոպական կինոակադեմիան անցկացնում է Եվրոպական կինոյի ամիս միջոցառումը, որին միանում են եվրոպական տարբեր կինոթատրոններ: Այս ամիսն ամփոփվում է Եվրոպական կինոակադեմիայի մրցանակաբաշխությամբ եւ հայտարարվում են եվրոպական լավագույն ֆիլմերը: Ուրախ եմ նշել, որ այս տարի Հայաստանն առաջին անգամ միանում է այս նախաձեռնությանը՝ ցուցադրելով 10 եվրոպական ֆիլմ»,-նշեց ծրագրի պատասխանատու Սոնա Կարապողոսյանը:

Հայաստանի կինոգործիչների միության նախագահ Հարություն Խաչատրյանն իր խոսքում կարեւորեց ծրագրի անցկացումը: Իսկ Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, արտակարգ եւ լիազոր դեսպան Վասիլիս Մարագոսն իր խոսքում ընդգծեց՝ մեծ պատիվ է լինել այս ծրագրի մասը:

Ծրագրի իրականացմանը աջակցել են նաեւ Ֆրանսիայի դեսպանությունը, Շվեցարիայի դեսպանությունը, Թբիլիսիում Ավստրիայի դեսպանությունը, «Գյոթե» կենտրոնը, EUNIC Հայաստանը եւ Դանիական ինստիտուտը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՍՊԵՐՑՅԱՆԸ՝ «ԿՐԱՍՆՈԴԱՐ»–«ՕՐԵՆԲՈՒՐԳ» ԽԱՂԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՖՈՒՏԲՈԼԻՍՏ

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի կիսապաշտպան Էդուարդ Սպերցյանը ճանաչվել է «Կրասնոդար»-«Օրենբուրգ» խաղի լավագույն ֆուտբոլիստ:

Ռուսաստանի ֆուտբոլի առաջնության 14-րդ տուրի շրջանակում «Կրասնոդար»-ը, սեփական հարկի տակ ընդունելով «Օրենբուրգ»-ին, առավելության է հասել 4:0 հաշվով:

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի ավագ Էդուարդ Սպերցյանն այդ խաղում դարձել է գոլի հեղինակ ու ճանաչվել հանդիպման լավագույն ֆուտբոլիստ:

Այժմ «Կրասնոդար»-ը ռուսական Պրեմիեր լիգայի մրցաշարային աղյուսակում 1-ին տեղում է եւ ունի 36 միավոր: Երկրորդ տեղում 33 միավորով «Զենիթ»-ն է:

«ՆՈԱ»–Ն ՄԻԱՆՈ՞Ւ Մ Է ՀՖՖ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ՊԱՀԱՆՋԻՆ

«Նոա» ֆուտբոլային ակումբը հայտարարությամբ է հանդես եկել՝ այդպես էլ չիստակեցնելով՝ աջակցո՞ւմ է ՀՖՖ-ին, թե՞ միանում հրաժարականը պահանջողներին:

««Նոա» ՖԱ-ն չի մասնակցել ՀՖՖ ընտրություններին:

Ակումբն աշխատում է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի հետ ՀՖՖ-ին առնչվող խնդիրների շուրջ՝ հանուն արդար խաղի կանոնների:

Հայաստանում կան պրոֆեսիոնալ եւ մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ռազմավարության բազմաթիվ հարցեր, այդ թվում՝ մեր կողմից բարձրացված, որոնց շուրջ քննարկումներ են ծավալվում ՀՖՖ-ի հետ՝ փորձելով գտնել լուծումներ:

Հայկական ֆուտբոլի առջեւ ծառացած խնդիրների քննարկման եւ լուծման գործում «Նոան» կարեւորում է նաեւ ֆուտբոլասերների եւ մեր սիրելի երկրպագուների մասնակցությունը՝ գնահատելով վերջիններիս ջանքերը:

«Նոա» ՖԱ-ն շարունակում է իր ճանապարհը հայկական ֆուտբոլի զարգացման երկարաժամկետ եւ հեռանկարային ծրագրերով՝ հանուն այս նպատակների պատրաստ է համագործակցել բոլոր շահագրգիռ կողմերի հետ:

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ կոչ ենք անում հայկական ֆուտբոլի ապագայով մտահոգված բոլոր ուժերին նստել մեկ սեղանի շուրջ եւ քաղաքակիրթ ձեւով բանակցել ու հասնել փոխըմբռնելի լուծումների:

«Նոա» ֆուտբոլային ակումբը պատրաստ է աջակցել այս գործընթացին՝ համախմբելով բոլոր ուժերին մեկ ընդհանուր նպատակի շուրջ, այն է՝ զարգացնել հայկական ֆուտբոլը եւ տոն պարգեւել մեր սիրելի երկրպագուներին:

Բոլորիս մաղթում ենք ֆուտբոլային նոր վերելքներ»,-ասված է հայտարարության մեջ:

● *Նոյեմբերի 12-ին՝ ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում կցուցադրվի «Կեսարի խրախճանքը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-8.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Արդյո՞ք ՀՀ զորամասերից հրաժարվելու պարագայում հնարավոր է խուսափել պարտադիր զինորական զինծառայությունից:

Արմեն Նիկողոսյան (27 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Զինվորական հաշվառումից հանվում են օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցրած անձինք:

Քաղաքացիները պարտավոր են զինվորական հաշվառման, ինչպես նաեւ պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու համար ներկայանալ իրենց հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատ: Պարտադիր զինվորական ծառայության զորակոչը հայտարարվելուց հետո բոլոր զորակոչիկները պարտավոր են ծանուցագրում նշված ժամկետում ներկայանալ այն զինվորական կոմիսարիատ, որտեղ նրանք հաշվառված են: Զինվորական ծառայությունից պահեստ արձակված քաղաքացիները պարտավոր են յոթն օրյա ժամկետում ներկայանալ հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատ՝ զինվորական հաշվառման համար: Հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրը փոխելու դեպքում զինապարտները զինվորական հաշվառման կանգնելու համար պարտավոր են ներկայանալ համապատասխան զինվորական կոմիսարիատ՝հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) նոր վայր ժամանելուց հետո՝ յոթնօրյա ժամկետում:

ՀՀ ՊՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Զինվորական ծառայության ընթացքում դատապարտված եւ ազատազրկման ձեւով պատիժ կրած անձինք պարտավոր են պատժի կրումից ազատվելու պահից յոթնօրյա ժամկետում ներկայանալ հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատ: Զինապարտներն իրենց առողջական վիճակի, ընտանեկան դրության, հաշվառման (հաշվառում չունեցողները՝փաստացի բնակության) վայրի, կրթության, աշխատավայրի եւ պաշտոնի փոփոխությունների մասին պարտավոր են յոթնօրյա ժամկետում հայտնել հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատ:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԱՌԱՔՈՒՄ

ՀԱՐՑ. Ի՞նչ տեսակի առաքանիներ է սպասարկում «ՀայՓոստ»-ը:

Նաիրա Պողոսյան (37 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «ՀայՓոստ»-ի միջոցով կարելի է ուղարկել եւ ստանալ.

- նամակներ
- բացիկներ
- փաթեթներ
- ծանրոցներ
- մանր կապոցներ
- սեկոգրամներ
- Մ- միջազգային պարկեր

Մ-միջազգային պարկը մեկ հասցեով ուղարկվող, մինչեւ 30 կգ քաշով տպագրական նյութ է (թերթեր, ամսագրեր, հրատարակչական պարբերություններ, գրքեր եւ այլն):

Սեկոգրամը բացառապես կույրերի համար նախատեսված փոստային առաքանի է, որը հանձնվում է բաց տեսքով, սեկոգրաֆիայի եղանակով գրված նամակագրական հաղորդակցություններով եւ հրատարակություններով, սեկոգրաֆիայի նշաններով՝ կլիշեներով, ձայնագրություններով, տիֆլոտեխնիկական միջոցներով:

Փաթեթով ուղարկվում են մինչեւ 2 կգ քաշով տպագրական նյութեր, գործարար թղթեր եւ այլ փաստաթղթեր:

«ՀայՓոստ» ՓԲԸ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Մանր կապոցը պատվիրված փոստային առաքանի է, որի միջոցով ուղարկվում են մինչեւ 2 կգ քաշով նվերներ, հուշանվերներ, եզակի նմուշներ եւ այլ մանր իրեր:

Ծանրոցը առավելագույնը 20 կգ թույլատրելի քաշով առաքանի է:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝համացանցից

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի կիսապաշտպան Էդուարդ Սպերցյանը ճանաչվել է «Կրասնոդար»-«Օրենբուրգ» խաղի լավագույն ֆուտբոլիստ: Ռուսաստանի ֆուտբոլի առաջնության 14-րդ տուրի շրջանակում «Կրասնոդար»-ը, սեփական հարկի տակ ընդունելով «Օրենբուրգ»-ին, առավելության է հասել 4:0 հաշվով. Սպերցյանն այդ խաղում դարձել է գոլի հեղինակ ու ճանաչվել հանդիպման լավագույն ֆուտբոլիստ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	0 - 4 + 8 + 12
Կոտայքի լեռներ	-1 - 5 + 7 + 11
Կոտայքի նախալեռներ	0 + 2 +13 + 15
Գեղարքունիք	0 - 5 + 6 + 11
Լոռի	-1 - 5 +10 + 13
Տավուշ	- 2 + 3 +12 + 15
Արագածոտնի լեռներ	0 - 3 + 7 + 11
Արագածոտնի նախալեռներ	-1 + 3 +11 + 15

Արարատ	0 + 3 +17 + 19
Արմավիր	-1 + 2 +17 + 19
Վայոց ձորի լեռներ	-2 - 5 + 9 + 11
Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +17 + 19
Սյունիքի հովիտներ	+ 3 + 7 +16 + 19
Սյունիքի նախալեռներ	0 - 2 + 9 + 12
ԼՂՀ	0 - 4 + 9 + 13
Երեւան	+ 6 + 8 + 16 + 18

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **4.11.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*